

# Քաղաղացիների ընդունելություն՝ Գեղարքունիքի մարզպետարանում

07.11.2017

Նոյեմբերի 7-ին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանի մոտ կայացավ քաղաքացիների հերթական ընդունելությունը: Դրամական օգնության խնդրանքով մարզպետի տեղակալին դիմեցին 17, բնակարանի վերանորոգման խնդրանքով՝ 2, ջրամատակարարման ապահովման խնդրանքով՝ 1 աշխատանքի տեղավորման խնդրանքով՝ 2 եւ անձնական հարցերով՝ 4 քաղաքացի: Բարձրացված հարցերի մի մասը դրական լուծում ստացավ տեղում, իսկ մի մասն էլ վերցվեց հաշվառման, որոնց պատասխանը կտրվի օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում: